ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 հունիսի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

73
(2923)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԵՌԱՊԱՏԿԵԼ Է ՍՏԱՑԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Հանրության մեջ տարբեր հարցումներով ամենատխրահռչակ պատգամավորներից Անդրանիկ Քոչարյանը 2021 թվականի հունիսի 20-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից ընտրվել է ԱԺ պատգամավոր, դարձել ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:

Անդրանիկ Քոչարյանը մինչ 2018 թվականի հեղափոխությունը անվտանգության հարցերով փորձագետ է եղել տարբեր կազմակերպություններում:

Սակայն, հարկ է նշել, որ դեռ 1990-ականներից իշխանության տարբեր շարքերում եւս գործունեություն ծավալել է:

2019 թվականին ներկայացրած 2018 թվականի պաշտոնական պարտականությունները ստանձնելու հայտարարագրում Քոչարյանը հայտարարագրել է ընդամենը 1 բնակարան բազմաբնակարան բնակելի շենքում եւ 1 ավտոտնակ:

Նրա ֆինանսական միջոցները, պաշտոնը ստանձնելու ժամանակ, կազմել են ընդամենը 5 մլն դրամ:

ԱԺ պատգամավոր Քոչարյանի 2018 թվականի հայտարարագիրը նման սուղ եւ ոչ ինֆորմատիվ էր, սակայն նույնը չենք ասի անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների եւ շահերի հայտարարագրի մասին:

2023 թվականի հայտարարագրից հասկանում ենք, որ իշխող ՔՊ կուսակցության կարկառուն դեմք համարվող Քոչարյանը 6 տարիների ընթացքում եւս մեկ բնակարան է ձեռք բերել: Բնակարանը, որը գտնվում է Երեւան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում, ըստ հայտարարագրի, պատգամավորը ժառանգություն է ստացել 2020 թվականին, սակայն ում կողմից՝ անհայտ է:

Անդրանիկ Քոչարյանի տարեկան եկամուտները նախորդ՝ 2022 թվականի հայտարարագրի համեմատ ավելացել են 3 միլիոնով, իսկ 2021 թվականի եկամուտները 2022-ի համեմատ՝ 1 միլիոնով:

Ստացվում է, որ վերջին 2-3 տարում Քոչարյանի աշխատանքի վարձատրությունը Ազգային ժողովի աշխատակազմից ավելացել է 4 մլն դրամով:

Նախորդ՝ 2022 թվականի հայտարարագրի համեմատ 2023 թվականի հայտարարագրում Քոչարյանի կանխիկ դրամական միջոցները գրեթե եռապատկվել են:

Այսպիսով՝ 2022 թվականին պատգամավորի կանխիկ դրամական միջոցները կազմելեն 2 մլն 300 հազար դրամ, իսկ այս տարի Անդրանիկ Քոչարյանի կանխիկ դրամական միջոցները կազմել են 2 հազար եվրո, 3 հազար ԱՄՆ դոլար, 4 մլն 700 հազար դրամ:

Անդրանիկ Քոչարյանը կանխիկ դրամական միջոցների ստացման աղբյուրը չի հայտարարագրել:

Հարցական է, թե որտեղից է Քոչարյանը տնտեսել այս ֆինանսական միջոցները:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



ՀՀ Գլխավոր դատախազությունը ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի դեմ ներկայացված հաղորդումը ուղարկել է ՀՀ քննչական կոմիտե՝ ստուգման: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեցին Գլխավոր դատախազությունից: Ինչպես հայտնի է, «Հայաստան» խմբակցության պատգամավորները հանցագործության մասին հաղորդում էին ներկայացրել ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի դեմ: Արծվիկ Մինասյանը Armlur.am-ի հետ զրույցում հաստատել էր տեղեկությունը: Իսկ ինչ էր արել Արթուր Հովհաննիսյանը. մասնավորապես, նա մայիսի 1-ին ԱԺ ամբիոնից նշել էր, որ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը իր՝ «կարմիր գծեր» անցնող հայտարարություններով ամեն ինչ անում է, որ եւս մեկ անգամ իր քթի վիրահատությանը անդրադառնա: Բանն այն է, որ 2023 թվականի սեպտեմբերի 20-ին՝ կառավարության շենքի մոտ տեղի ունեցած բախումների ժամանակ, վնասվածք էր ստացել նաեւ պատգամավոր Գեղամ Մանուկյանը, որի քիթը վիրահատեցին: Եվ ահա, ըստ էության, Արթուր Հովհաննիսյանը միգուցե իր այս հայտարարությամբ փորձել է հասկացնել Գեղամ Մանուկյանին, որ «կարմիր գիծը» չհատի, այլապես քիթը կրկին կկոտրեն ու ստիպված կլինի երկրորդ անգամ այն վիրահատել. ու այս իրավիճակից ելնելով էլ՝ «Հայաստան» խմբակցության պատգամավորները ակնհայտ սպառնալիքի մասով դիմել են Գլխավոր դատախազություն՝ հանցագործության մասին հաղորդում ներկայացնելով, որն էլ դատախազությունը ուղարկել է Քննչական կոմիտեին՝ հաղորդումը ստուգելու:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը ուրբաթ օրը փակ հանդիպում է ունենալու Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուի հետ: Մեր տեղեկություններով՝ դատավորի թեկնածուն Գոհար Մուրադյանն է: Նրա ընտրության հարցը ընդգրկված կլինի ԱԺ առաջիկա քառօրյա նիստերի օրակարգում: Մինչ դա, սակայն, իշխանականները փակ հանդիպման են հրավիրել դատավորին, որպեսզի իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները ստանան ու, ըստ այդմ, որոշեն՝ ընտրելո՞ւ են նրան, թե՞ ոչ. արդյո՞ք նա իրենց նարատիվներով է առջնորդվում, թե՞ ոչ:



Այսօր արտգործնախարար Արարատ Միրզոյանը կգնա խորհրդարան: Ինչպես հայտնի է, այս շաբաթ ԱԺ գլխադասային հանձնաժողովներում 2023 թ.-ի պետական բյուջեի հաշվետվության քննարկումներն են ընթանում: Նախարարները, ուժային կառույցների ու պետական կառույցների ղեկավարները կամ ներկայացուցիչները գալիս են ԱԺ՝ յուրաքանչյուրն իր ոլորտի զեկույցը ներկայացնելու: Ահա այսօր, հերթը Արարատ Միրզոյանինն է՝ ԱԺ-ում հաշվետվությունը ներկայացնելու: Հիշեցնենք, որ հանձնաժողովներում 2023 թ.-ի պետական բյուջեի հաշվետվության քննարկումից հետո այն նաեւ ԱԺ քառօրյա նիստերին է քննարկվելու՝ կրկին վարչապետի եւ նախարարների մասնակցությամբ: Նշենք, որ Արարատ Միրզոյանը նախորդ շաբաթ եւս ԱԺ էր եկել՝ ՔՊ-ի հետ փակ հանդիպման:

ԶՐՈՒՅՑ

ԵԿԵՂԵՑՈՒՆ ՀԱՐԿԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

Ինչպես արդեն հայտնել ենք, իշխանությունները Հայոց եկեղեցու հարկման նախագիծ են մշակում, ինչը հատկապես արտահայտում է վերջին շրջանում Հայ Առաքելական եկեղեցու դեմ առկա լարվածությունը:

«Ժողովուրդ» օրաթերթը նախագծի եւ եկեղեցի-իշխանություն լարված հարաբերությունների մասին զրուցել է ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Զարուհի Բաթոյանի հետ:

-Տիկին Բաթոյան, օրեր առաջ հայտարարվեց, որ իշխանությունները քննարկում են եկեղեցին հարկելու նոր նախագիծ, որն արդեն ընթացքի մեջ է: Ինչու՞ հենց այս փուլում, երբ եկեղեցին իր դժգոհության ձայնը բարձրացրեց, նման մտադրություն առաջացավ:

-Նախ՝ եկեղեցին հարկելու մասին չէ խոսքը: Ծովինար Վարդանյանն իր ճեպազրույցում հայտնել է, որ խոսքը հստակ գույքի մասին է. անշարժ գույքերի, որոնք գուցե օգտագործվում են առեւտրային եւ տնտեսական նպատակներով, եւ այնպես, ինչպես որ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված բոլոր այլ կառույցներն են հարկվում, եթե դրանք իրականացնում են տնտեսական շահույթ հետապնդող գործունեություն եւ այդ դեպքում պետք է հասկանալ եւ վերանայել, դրա մասին է խոսքը: Իսկ հարցին՝ «ինչո՞ւ հիմա» պատասխանեմ՝ իսկ «ե՞րբ»...

-Խնդիրն այն է, որ ասես որոշակի ճնշման միջոց լինի, քանի որ գիտենք, թե հենց այս փուլում եկեղեցին ինչ գործընթացների մեջ է: Ինչո՞ւ հենց հիմա նման նախաձեռնությամբ հանդես եկավ իշխանությունը:

-Ես չեմ կարծում, որ օրենքի կիրարկումը ճնշում է քաղաքացու կամ կազմակերպության վրա, որովհետեւ օրենքին ենթարկվելը եւ օրենքով սահմանված կարգով գործելը, կարծում եմ, նորմալ է, եւ այդպես էլ պիտի լինի. դրա կիրարկումը ճնշում չեմ կարող համարել: Այնպես որ, ես այդ դիտարկման հետ համաձայն չեմ:

-Ինչո՞ւ մինչեւ հիմա նման նախաձեռնությամբ հանդես չէր գալիս ինշխանությունը:

-Մենք երբ էլ այս մասին քննարկումներ սկսեինք, միեւնույնն է պիտի հարց ծագեր՝ «ինչո՞ւ հիմա»: Նախ, եթե չեմ սխալվում, մենք որոշակի քննարկումներ արդեն իրականացրել ենք, որը վերաբերում է գործունեության որոշակի տեսակների: Այսինքն՝ այնպես չէ, որ ընդհանրապես նման քննարկում չի եղել, եւ այս խոսակցությունները հանրային տիրություն, համենայնդեպս, միշտ եղել են, եւ այնպես չէ, որ դա կապված է որեւէ այլ գործունեության կամ իրադարձության հետ: Բացի դրանից, մենք երբ էլ որեւէ քննարկում իրականացնենք, միշտ «ինչո՞ւ հիմա» հարցը ծագելու է, այնպես որ, չեմ կարծում, որ պետք է կապել դրանք իրար հետ:

-Տիկին Բաթոյան, տեսնում ենք, որ իշխանությունների կողմից հոգեւորականների, եկեղեցու վերաբերյալ շատ կոշտ հայտարարություններ են հնչում: Ինչո՞ւ են եկեղեցի-իշխանություն հարաբերությունները այս աստիճանի խաթարված:

-Ես ինքս կոշտ մեկնաբանությունների չեմ հանդիպել, բայց, կարծում եմ, եթե այդպիսին եղել են, դրանք եղել են համարժեք, այն գործունեությանը, որոնք իրականացնում են եկեղեցական որոշակի սպասավորներ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԼՐԱԳՐՈՂԸ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ Է ՓԱՐԻԶ

Ֆրանսիահայ լրագրող Լեո Նիկոլյանը, որը Հայաստանի «Զվարթնոց» օդանավակայանում 1 ամսից ավել հացադուլ իրականացրեց, արդեն վերադարձել է Փարիզ:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նա պատմեց, որ օդանավակայանում միջադեպ է եղել. ՀՅԴ բյուրոյի անդամ Մուրադ Փափազյանը չի ցանկացել, որ ինքը նույն ինքնաթիռով մեկնի.

«Երբ աշխատակցուհին հարցրեց՝ ինչու՞ չի ցանկանում, Մուրադ Փափազյանն ասաց, թե՝ կռիվ կարող է անեմ ինքնաթիռում, դրա համար. բայց դա անհնար էր, քանի որ ես քնած եմ եղել ողջ ճանապարհին: Ամեն դեպքում ես ուրիշ ինքնաթիռով եմ վերադառնում Փարիզ»,-ասաց նա:

Լեո Նիկոլյանի խոսքով՝ Փարիզի օդանավակայան հասնելուն պես 8 ոստիկան իրեն մոտեցել ու բերման են ենթարկել.

«Հենց հասա Փարիզ 8 ոստիկան՝ զինված, չգիտեմ՝ ում էին սպասում, երեւի Բեն Լադենին, մոտեցան ու հենց իմ աթոռով, քանի որ չեմ կարողանում քայլել, տարան ոստիկանություն:

Այնտեղ մնացի երկու օր, այդ ընթացքում նաեւ ինձ հիվանդանոց տարան, ու ազատ արձակեցին:

Հիմա Փարիզի իմ տանն եմ»,-պատմեց նա:

Հարցին, իսկ հացադուլը դադարեցնելու որոշում ունի՞, Լեո Նիկոլյանն ասաց, որ այսօր այդ մասով որոշում կկայացնի:

Հիշեցնենք՝ դեռ ապրիլի 23-ին ֆրանսիահայ լրագրող Լեո Նիկոլյանին, «Զվարթնոց» օդանավակայանի անձնագրերի ստուգման կետ հասնելուց հետո, թույլ չեն տվել մուտք գործել ՀՀ տարածք՝ ասելով, որ նրա մուտքն արգելված է: Նիկոլյանն անժամկետ հացադուլ էր հայտարարել օդանավակայանում:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՉԽՈՍԵԼՈՒ ԾՈՄ Է ՊԱՀՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Երեկ ձերբակալվածների պահման վայրում տեսակցել եմ ձերբակալվածներին, որոնց, անհամաչափ ուժի կիրառմամբ, բերման են ենթարկել եւ պահում են Երեւանի ՀՊՎ-ում:

Մարդկանց ապօրինաբար զրկել են ազատությունից այն դեպքում, երբ նրանք ոչ մի հանցանք չեն գործել, անգամ տեսանյութերում փաստվում է դա:

Անընդունելի է պետության նման վերաբերմունքը ՀՀ քաղաքացիների, հատկապես՝ հայ առաքելական սուրբ եկեղեցու սպասավորների նկատմամբ:

Ոստիկանության աշխատակիցները դաժանաբար ծեծել են Դանիել սարկավագին՝ բացականչելով «խփի՛, հայր սուրբ ա»:

«Ժողովրդավարության բաստիոն» Հայաստանում խախտվում է մարդկանց ազատ կամարտահայտման, հավաքների ազատության իրավունքները եւ նսեմացվում հոգեւորականի դերն ու արժանապատվությունը:

Ձերբակալվածներից Արթուր Հովհաննիսյանը խոսելու ծոմ է պահում արդեն արդեն 3 օր է: Նա ոչ ոքի հետ չէր խոսում՝ այդպիսով արտահայտելով իր դժգոհությունը ապօրինությունների վերաբերյալ:

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՆ ՔՆՆԱՐԿՎԵԼ

Հունիսի 3-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Վրաստանի արտաքին գործերի նախարար Իլյա Դարչիաշվիլիի հետ: Այդ մասին հայտնում են ՀՀ ԱԳՆ-ից:

Զրուցակիցները քննարկել են երկկողմ օրակարգային թեմաներ, այդ թվում՝ առաջիկա ծրագրերը՝ միտված երկու երկրների միջեւ ռազմավարական համագործակցության հետագա ամրապնդմանը:

Արարատ Միրզոյանը եւ Իլյա Դարչիաշվիլին անդրադարձ են կատարել բազմակողմ օրակարգային հարցերի:

Նախարար Միրզոյանը գործընկերոջն է ներկայացրել ՀՀ Տավուշի եւ Լոռու մարզերում հեղեղումների հետեւանքները, աղետի գոտի ճանաչված համայնքներում իրականացվող աշխատանքները: Ի պատասխան՝ Վրաստանի ԱԳ նախարարը, ըստ անհրաժեշտության, օժանդակություն ցուցաբերելու պատրաստակամություն է հայտնել:

ՀՀ ԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԱՃԸ ԿԱՋՄԵԼ Է 6,5 ՏՈԿՈՍ

2023 թվականին Հայաստանի արդարադատության նախարարությունը պետբյուջեից ծախսել է գերատեսչությանը հատկացված 25 մլրդ 337 մլն դրամ: Այս մասին Ազգային ժողովում 2023 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության քննարկման ժամանակ ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում հայտարարեց ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը:

Միջոցների իրացումը կազմել է 99,4%: Սա, ըստ նախարարի, 6,5 տոկոսով ավելի է 2022 թվականի ցուցանիշից: «Արդարադատության նախարարությունն իրականացրել է 8 ծրագիր՝ 38 գործունեությամբ»,- հավելեց Հովհաննիսյանը:

ԲԱԲԱՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Արցախի 5-րդ շարասյան գլխավոր դերակատարները Բաքվի բանտում գտնվող Արցախի ռազմաքաղաքական գործիչներն են:

Այս մասին հայտարարել է Արցախի ՊԲ նախկին հրամանատար Սամվել Բաբայանը:

«5-րդ շարասյունը՝ Բակո Սահակյան, Արկադի Ղուկասյան, Ռուբեն Վարդանյան, Դավիթ Իշխանյան, Դավիթ Բաբայան, Արայիկ Հարությունյան. սրանք գլխավոր դերակատարներն են», - ասաց նա:

Իսկ թե ինչ կլինի նրանց ճակատագիրը ըստ նրա՝ Բաբայանը նշեց. «ՀԱԱԳԱ-ի դատարանի նման մի պրոցես են անցկացնելու. այդ ամբողջ մեղքը բարդեն այդ մարդկանց վրա, թե իրենք են այդ ժողովուրդներին իրար դեմ հանել 30 տարի եւ այլն: Այն հոդվածները որոնցով նրանց պահում են Բաքվում, համաներման ենթական չեն, - նշեց Սամվել Բաբայանը:

ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՑ ԵՆ ԽՈՍԵԼ

Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովն ընդունել է ԱՄՆ Պետդեպարտամենտի Կովկասում բանակցությունների գծով ավագ խորհրդական, ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Լուի Բոնոյին:

Ինչպես հաղորդում է ԱՊԱ-ն՝ վկայակոչելով Ադրբեջանի ԱԳՆ-ին, հանդիպմանը մտքերի փոխանակում է տեղի ունեցել Ադրբեջանի եւ ԱՄՆ-ի միջեւ երկկողմ եւ բազմակողմ համագործակցության օրակարգի տարբեր ասպեկտների, եւ հետկոնֆլիկտային շրջանում տարածաշրջանային խաղաղ գործընթացի վերաբերյալ:

Բայրամովը Բոնոյին ներկայացրել է տարածաշրջանում իրավիճակի ադրբեջանական ընկալումը, հարաբերությունների կարգավորման եւ խաղաղ գործընթացի շուրջ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ ընթացող բանակցությունները, ինչպես նաեւ խաղաղության օրակարգի վերջին ձեռքբերումները:

Ադրբեջանցի նախարարն ընդգծել է, որ սահմանազատման հանձնաժողովների միջեւ վերջերս ձեռք բերված պայմանավորվածությունը, որը ներառում է «Հայաստանի կողմից օկուպացված 4 ադրբեջանական գյուղերի վերադարձը», եւս մեկ անգամ հաստատեց երկկողմ բանակցային գործընթացի օգտակարությունը տարածաշրջանային խաղաղությանն իրական ներդրում ունենալու եւ վստահության վերականգնման առումով:

Հանդիպմանը նշվել է, որ երկկողմ խաղաղ գործընթացի արդյունավետության մասին են վկայում նաեւ 2024 թվականի մայիսի 10-11-ը Ղազախստանի Ալմաթի քաղաքում կառուցողական ոգով տեղի ունեցած բանակցությունները:

ԹՐԱՄՓԸ ՏՎԵԼ Է ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ

ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ պատրաստ է գաղտնազերծել 2001 թվականի սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունների հետ կապված փաստաթղթերը, եթե հաղթի նախագահական ընտրություններում: Այս մասին նա ասել է հունիսի 2-ին ամերիկյան Fox News հեռուստաալիքին տված հարցազրույցում:

Բացի այդ, նա պատրաստակամություն է հայտնել հրապարակել փաստաթղթեր 1963 թվականին ԱՄՆ 35-րդ նախագահ Ջոն Քենեդիի սպանության, ինչպես նաեւ կանանց, այդ թվում՝ անչափահաս, սեռական շահագործման ենթարկելու համար մեղադրված եւ բանտում ինքնասպանություն գործած միլիարդատեր Ջեֆրի Էփշտեյնի գործի վերաբերյալ:

Նրա խոսքով՝ դա արվելու է ամերիկյան ինստիտուտների նկատմամբ կորցրած վստահությունը վերականգնելու համար:

ՓՈԽՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ

ՉԵՂԱՐԿՎԵԼ ԷՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

Ինչպես ստացվեց, որ ԿԳՄՍ նախարարի թեթեւ ձեռքով 42 մլն դրամ արժողությամբ միջոցառումը ձախողվեց փոխնախարար Դանիել Դանիելյանի (մշակույթի գծով) ոչ ադեկվատ աշխատանքի պատճառով:

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը՝ Բագրատ Սրբազանի գլխավորությամբ, շաբաթ օրը՝ հունիսի 1-ին, հասել էր Գյումրի, որտեղ ժամը 14:00-ին մշակութային միջոցառում պիտի կայանար, սակայն ՀՀ ԿԳՄՍ փոխնախարար Դանիել Դանիելյանի թեթեւ ձեռքով չեղարկվեց: Տավուշի թեմի «Տա լույս» երգչախմբին չթույլատրեցին ելույթ ունենալ Շառլ Ազնավուրի 100-ամյակին նվիրված միջոցառմանը: Բագրատ Սրբազանը ամոթանք տվեց ԿԳՄՍ փոխնախարար Դանիել Դանիելյանին՝ հայտարարելով, որ նա դեռ ներողություն պիտի խնդրի իր պահվածքի համար:

Այսպիսով, ինչ էր իրականում պատահել. ԿԳՄՍ փոխնախարար Դանիել Դանիելյանը, տեղեկանալով, որ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը՝ Բագրատ Սրբազանի գլխավորությամբ, գալիս է Գյումրի, նախ փոխել էր Գյումրիում կայանալիք միջոցառման մեկնարկի ժամը, ապա, ըստ մասնակիցների, պահանջել էր բեմն ապամոնտաժել եւ համերգը չեղարկել: Համերգը կայացել է, սակայն «Տա լույս» մանկական երգչախումբն այդպես էլ չի երգել: Փոխնախարար Դանիելյանը վիճաբանություն էր ունեցել «Տա լույս» երգչախմբի պրոդյուսեր, ուրարակիր Թովմաս Առաքելի հետ՝ նրա սքեմն անվանելով «դերյա»: Սա փոխնախարարին ոչ հարիր պահվածք է, որը ցուցաբերել է թերեւս դաստիարակչական եւ կրթական ուղղվածություն ունեցող նախարարության ներկայացուցիչը:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձել է Ֆրանսիայից Հայաստան եկած փոխնախարարից պատասխաններ ստանալ, թե որն է եղել նրա ագրեսիվ վարքագծի պատճառը, ինչու է փոխնախարարը արգելել ելույթ ունենալ տաղանդավոր մանկական երգչախմբին:

«Ժողովուրդ» օրաթերթի գրավոր հարցերին ի պատասխան՝ փոխնախարարը հայտնել է.

«ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորմամբ եւ համագործակցությամբ համերգն իրականացրել է «Ազնավուր» հիմնադրամը: Միջոցառման աջակիցն էր Գյումրու համայնքապետարանը:

Համերգի սկիզբը նախատեսված էր ժամը 14:00-ին, սակայն կազմակերպչական եւ տեխնիկական աշխատանքներով պայմանավորված՝ «Ազնավուր» հիմնադրամի հետ փոխհամաձայնեցված, համերգը տեղափոխվել է 1 ժամ շուտ եւ կայացել է ժամը 13:00-ին: Այս մասին, բնականաբար, նախապես տեղեկացվել է նաեւ համերգի մասնակիցներին: Համերգին նախատեսված էին Swag Kids մանկապատանեկան խմբի, եվրատեսիլյան պատվիրակներ Նարե Ղազարյանի եւ «Yan Girls» խմբի, Երեւանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի եւ արվեստի պետական քոլեջի երգչախմբի, Տավուշի թեմի «Տա Լույս» մանկական երգչախմբի ելույթները: «Տա-Լույս» մանկական երգչախմբի ղեկավարը եւ պրոդյուսերը, սակայն, կտրականապես հրաժարվել են համերգին 1 ժամ շուտ մասնակցությունից եւ թույլ չեն տվել երգչախմբին ելույթ ունենալ: Այս ամենը մեզ համար անչափ ցավալի էր, քանի որ երեխաները եկել հասել էին Գյումրի, առավոտյան տեղում մասնակցել փորձերին, տրամադրված եւ անհամբեր սպասում էին համերգին: Երեխաների՝ համերգին չմասնակցելու որոշումը կայացվել է բացառապես երգչախմբի ղեկավարների կողմից: Մեր կողմից որեւէ խոչընդոտ չի եղել, հակառակը՝ նախարարությունն ամեն ինչ արել է, որպեսզի ի սկզբանե բոլոր խմբերը, այդ թվում՝ նաեւ Տավուշի թեմի «Տա-Լույս» մանկական երգչախումբը, մասնակցեն հունիսմեկյան տոնական համերգին: Համերգի ավարտից հետո բեմը տեխնիկական անձնակազմի կողմից ապամոնտաժվել է, ինչը սովորական աշխատանքային գործընթաց է բոլոր նման կարգի միջոցառումների համար»:

Փոխնախարարը մանրամասներ է ներկայացրել, սակայն մեդալի մյուս կողմը շրջել, կարծես թե, չի ցանկացել: Երգչախմբի գեղարվեստական ղեկավար Մարիա Գալստյանը լրագրողների հետ զրույցում պատմեց, որ թեեւ համերգը սկսվելու էր ժամը 14:00-ին, ինքը հեռախոսով հրահանգ է ստացել ԿԳՄՍ փոխնախարար Դանիել Դանիելյանից կազմ-պատրաստ լինել ետնաբեմում, քանի որ սկսելու են մեկ ժամ շուտ. թե որն է պատճառը, որեւէ բացատրություն չի տրվել: Այդ ընթացքում երգչախմբի երեխաները փոքր-ինչ փորձել են հանգստանալ, սնվել, տաղավար չլինելու պատճառով՝ երկու երեխա ուշագնաց են եղել: Փոխնախարարին բացատրել են, որ դա անհնար է, երեխաները պետք է ֆիզիկապես պատրաստ լինեն: Սակայն փոխնախարարն անդրդվելի է եղել՝ երեխաներից պահանջելով լրացուցիչ ջանքեր: Եվ, վերջնարդյունքում, փոխնախարարի քմահաճույքները չկատարելու համար երեխաները ելույթից զրկվել են:

«Ժողովուրդ» օրաթերթը փոխնախարարի հետ զրույցում ճշտեց, թե ինչու է «Տա լույս» երգչախմբի պրոդյուսեր, ուրարակիր Թովմաս Առաքելի սքեմն անվանել «դերյա», որին ի պատասխան՝ փոխնախարարը խույս է տվել եւ միջադեպն անվանել է սադրանք.

«Այդ կարգի խոսակցություններն ուղղակի սադրանք են եւ կապ չունեն իրականության հետ: Ցավալի է նաեւ, որ շատ կարեւոր նշանակություն ունեցող՝ Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակի հոբելյանական միջոցառումները, որոնք իրականացնում ենք մեծ պատասխանատվությամբ, որոշակի շրջանակի կողմից փորձ է արվում քաղաքականացնելու: Համերգը եղել է բացառապես մշակութային միջոցառում:

Վերջին երկու օրերին սոցիալական հարթակներում ընդգծված ատելության խոսք է տարածվում պետական պաշտոնյաների, միջոցառման կազմակերպիչների եւ հովանավորների նկատմամբ: Հնչում են անձնական վիրավորանքներ, հերյուրանքներ եւ կեղծ տեղեկատվություն:

Կոչ ենք անում զերծ մնալ տարաբնույթ գնահատականներ տալուց, ապատեղեկատվությունից եւ իրավիճակը խեղաթյուրող անհիմն «փաստեր» ներկայացնելուց»:

Փոխախարարը պատասխանում չի առանձնացրել, թե ինչպես է դեպքը տեղի ունեցել, ինչու է համերգը պլանավորածից շուտ սկսել, չկա հստակ հիմնավորում՝ ինչո՞ւ, ինչպե՞ս, որո՞նք են նման մեծ համերգի ձախողման պատճառները:

Հավելենք, որ միջոցառումը կազմակերպվել է «Ազնավուր» հիմնադրամի եւ ԿԳՄՍ նախարարության համագործակցության արդյունքում: Միջոցառման կատարման համար պայմանագիրը կնքվել էր մայիսի 5-ին, իսկ միջոցառման ընդհանուր արժեքը կազմել է 42 մլն դրամ: Միջոցառումը նախատեսված է եղել 3 500 անձի համար:

Ինչ է սա, եթե ոչ պետական ֆինանսական միջոցների մսխում, այն դեպքում, երբ Ֆրանսիայից Հայաստան եկած փոխնախարար Դանիել Դանիելյանը ծախսում է ՀՀ սուղ պետբյուջեի միջոցները՝ խոչընդոտելով համերգի կայացմանը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԲԴԽ–Ն ՆՈՐ ԱՆԴԱՄ ՈՒՆԻ

Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամ է ընտրվել Մերի Համարձումյանը:

Այս մասին տեղեկացնում է Դատական իշխանությունը:

Քվեարկությանը մասնակցել են 233 դատավոր, ձայների մեծամասնությամբ՝ 199 կողմ ձայներով ԲԴԽ դատավոր անդամ ընտրվեց Վարչական դատարանի դատավոր Մերի Համբարձումյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՄԱՄՆԱԿՑՈՒՄ Է Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

Հայաստանի փոխվարչապետ Միեր Գրիգորյանն է մասնակցում Մինսկում Եվրասիական միջկառավարական խորհրդի (ԵՄԽԽ) նիստին: Այս մասին հայտնում է ՏԱՍՍ-ի թղթակիցը միջոցառման վայրից:

Նշվում է, որ Գրիգորյանի գլխավորած հայկական պատվիրակությունը հունիսի 3-ի առավոտյան ժամանել է Մինսկի մերձակայքում գտնվող «Великий камень» չինական-բելառուսական արդյունաբերական պարկ, որտեղ անցկացվելու է Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԱԱԾ-Ի ՀԵՐՔՈՒՄԸ

ՊԱՐԶԵԼ ԵՆ՝ ՍՐԲԱԶԱՆԸ ԳՈՐԾԱԿԱԼ ՉԷ

ԱԱԾ-ում պաշտոնապես հերքվել է Բագրատ Սրբազանի գործակալ լինելու մասին իշխանական շրջանակների կողմից շրջանառության մեջ դրված տեղեկատվությունը:

Իշխանական «Սիվիկ» լրատվականի լրագրող Դավիթ Լեւոնյանի հայտարարությունները, թե Սրբազանը ԿԳԲ գործակալ է, միլիոնավոր դոլարներ է ստացել Կրեմլից, եւ այդ հայտարարությունների առնչությամբ՝ Լեւոնյանի նկատմամբ սուտ մատնության համար վարույթ նախաձեռնելու հաղորդումը շուրջ մեկ ամիս ստուգման առարկա է դարձել ԱԱԾ-ում, սակայն Բագրատ Սրբազանի դեմ ոչինչ չեն հայտնաբերել: ՀՀ գլխավոր դատախազությունից հայտնել են, որ ստուգման ընթացքում նման տվյալներ չեն ստացվել: Ինչ վերաբերում է Դավիթ Լեւոնյանի կողմից ենթադրաբար սուտ մատնություն կատարելուն, ապա այդ դրվագով եւս քրեական վարույթ չի նախաձեռնվել:

«Սուտ մատնություն է համարվում՝ իրավասու մարմնին հանցագործության դեպքի կամ անձի կողմից հանցանք կատարելու մասին սուտ տեղեկություն տալը: Տվյալ պարագայում ՀՀ գլխավոր դատախազություն կամ որեւէ այլ իրավասու մարմին հանցագործության մասին հաղորդում չի ներկայացվել», - հայտնեցին դատախազությունից:

Հիշեցնենք, որ ապրիլի 29-ին «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել՝ պահանջելով 24 ժամվա ընթացքում կամ քրեական վարույթ նախաձեռնել եւ պատասխանատվության կանչել Բագրատ Սրբազանին, կամ սուտ մատնության համար պատասխանատվության կանչել իշխանական «Սիվիկ նյուզ» լրատվականի լրագրողին: Վերջինս փաստազուրկ մեղադրանքներ ու զրպարտանքներ է հնչեցրել սրբազանի հասցեին՝ մեղադրելով նրան, իբրեւ թե՝ ռուսական ԿԳԲ-ի գործակալ լինելու, Կրեմլից միլիոնավոր դոլարներ ստանալու, հայ-ադրբեջանական պատերազմ հրահրելու մեջ:

««Լրագրողական արհեստավարժ, առարկայական եւ անաչառ բովանդակությունից, մասնագիտական էթիկայից եւ բարեվարքությունից զուրկ, ավելի շուտ՝ բլոգերային մենախոսության տպավորություն գործող նշյալ տեսանյութում հնչում են պնդումներ, թե իբր նա ունի «ապացույցներ», ըստ որոնց՝ Հայ եկեղեցու Սրբազանը «միլիոնավոր դոլարներ է ստացել»:

Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ առանձնապես ծանր հանցագործության մասին հաղորդում: Իսկ համաձայն ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՁԼՄ-ով կատարված հրապարակումը քրեական գործ հարուցելու առիթ է:

Այսպիսով՝ իրավապահ մարմիններից պահանջում ենք՝ նշված անձի հաղորդման հիման վրա, 24 ժամվա ընթացքում կամ քրեական պատասխանատվության կանչել Բագրատ Սրբազանին, կամ սուտ մատնության համար ՀՀ Քրեական օրենսգրքի 476-րդ հոդվածով քրեական պատասխանատվության կանչել «լրագրող» ներկայացող նշված անձին եւ նրա տեսանյութը հրապարակած՝ «Յութուբ» մուլտիմեդիա-էլեկտրոնային հարթակի «Civic News» ալիքին»,- նշել էր շարժումը:

Նշված հաղորդման առնչությամբ ստուգումներ են իրականացվել ԱԱԾ-ում, որի արդյունքում, փաստորեն, հաստատվել է, որ իշխանամերձ շրջանակը զրպարտել է Բագրատ Սրբազանին: Նշենք, որ Բագրատ Սրբազանի անունից արդեն իսկ հայցադիմում է ներկայացվել Երեւանի քաղաքացիական դատարան՝ ընդդեմ Դավիթ Լեւոնյանի եւ «ՔՊ»-ի՝ (civic.am)-ի՝ զրպարտություն համարվող տվյալների հերքման պահանջով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՁՐԱՀԵՂՁՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԸ

Երեկ՝ հունիսի 3-ին, ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Սեւանի հատուկ ջրափրկարարական ջոկատի ջրասուզակները 2 օր որոնողական աշխատանքների արդյունքում Սեւանա լճում հայտնաբերեցին ջրահեղձ եղած կոմպոզիտորի մարմինը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Անահիտ Մնացականյանի հարազատներից Վահան Ազիբեկյանը դեպքի վերաբերյալ ասաց. «Դեռ դատաբժիշկը չի ուսումնասիրել, դեռ որեւէ բան չկա, օդից որեւէ վարկած չեմ կարող ասել»:

Նրա խոսքով՝ Անահիտը վերջին շրջանում ուներ ծանրաբեռնված գրաֆիկ, այդ 2 օրն ազատ էր, որոշել էր գնալ հանգստի: Այնտեղ եղել է միայնակ:

Հիշեցնենք, որ երեկ՝ վաղ առավոտից, համացանցում հայտարարություններ էին տարածվում, որտեղ նշվում էր, որ մայիսի 31-ի կեսգիշերից Սեւանի ափից որպես անհետ կորած որոնվում է 25-ամյա կոմպոզիտոր Անահիտ Մնացականյանը:

Հիշեցնենք, որ 2024 թվականի հունիսի 1-ին՝ ժամը 11:15-ին, Սեւանա լճում հանգստյան գոտիներից մեկի անվտանգությունից ահազանգ էր ստացվել բաժին այն մասին, որ իրենց մոտ հանգստացող Ա. Մնացականյանի հագուստը եւ իրերը հայտնաբերվել են լճի ափին, իսկ ինքը տարածքում չէ: Այս մասին գրել էր ՔԿ նախագահի մամուլի քարտուղար Գոռ Աբրահամյանը:

«Դեպքի առթիվ 2024 թ. հունիսի 1-ին՝ անհայտ կորելու հանգամանքով պայմանավորված, ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Սեւանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Սկսվել է նախաքննություն, նաեւ իրականացվել են որոնողական աշխատանքներ:

2024 թվականի հունիսի 3-ին նույն հանգստյան գուտու լողափի տարածքից՝ Սեւանա լճում՝ ափից 65-70 մետր հեռավորության վրա՝ 4 մետր խորությունից հայտնաբերվել է Երեւան քաղաքի 25-ամյա բնակիչ Ա. Մնացականյանի դին:

Դիակի զննությամբ արտաքուստ բռնության հետքեր չկան:

Իրականացվում է նախաքննություն: Մահվան հանգամանքները պարզելու նպատակով՝ նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն», - ասված է հաղորդագրության մեջ:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

Լ. ԵՐԱՆՈՍՅԱՆԸ ՀԱՄԱՆԵՐՎԵՑ

Երեկ դատավոր Հարություն Մանուկյանը հրապարակեց ՀՀ նախկին փոխխոստիկանապետ Լեւոն Երանոսյանի գործով վճիռը: ՀՀ նախկին փոխխոստիկանապետ Լեւոն Երանոսյանը համաներվեց:

ՀՀ նախկին փոխխոստիկանապետ Լեւոն Երանոսյանը Երեւան քաղաքի Ավանի դատարանում էր: Նա մեղադրյալի աթոռին էր 2018 թվականի հեղափոխության օրերին Բաղրամյան պողոտայում լուսաձայնային նռնակ կիրառելու քրեական գործով: Նա իր վերջին խոսքը ասաց դատարանում:

Մեղադրող դատախազը պահանջել էր 11 տարվա ազատազրկում:

Սակայն արդյունքում, նրա նկատմամբ կիրառվել է համաներում, ինչը նշանակում է, որ Երանոսյանը նշանակված պատիժը չի կրի:

ԽԱՌՆԱՇՓՈԹ՝ «ՔԱՐՖՈՒՐ» ՍՈՒՊԵՐՄԱՐԿԵՏՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ գիշերը ուշագրավ միջադեպ է տեղի ունեցել «Քարֆուր» սուպերմարկետի Արաբկիր վարչական շրջանում գտնվող մասնաճյուղում: Ժամը 22:05-ին անհայտ անձը «Քարֆուր» սուպերմարկետից գողացել է 3 շիշ խմիչք, որից երկուսը վերադարձրել է, իսկ մյուսը՝ դանակի սպառնալիքով բացահայտ հափշտակել եւ դիմել է փախուստի:

Իրավապահները պարզել են, որ դանակի սպառնալիքով խմիչք հափշտակած անձը 1993 թվականին ծնված Գ.Մ-ն է. ձեռնարկվում են միջոցառումներ՝ նրան հայտնաբերելու ուղղությամբ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱԴՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի՝ 2024 թվականի ապրիլի 19-ի, 29-ի, 30-ի, մայիսի 29-ի եւ 31-ի հրամաններով՝ Դատախազությունում տեղի են ունեցել կադրային փոփոխություններ:

Մասնավորապես՝

Գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական եւ իրավական ապահովման վարչության պետ Արմեն Մարուխյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Միհր Մկրտչյանը նշանակվել է Գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական եւ իրավական ապահովման վարչության պետի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչության պետի տեղակալի պաշտոնից:

Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալ Գուրգեն Հակոբյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետ Վահե Ռաֆայելյանը փոխադրվել է Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալի պաշտոնին:

Տաթեւիկ Սարուխանյանը նշանակվել է Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետի պաշտոնին՝ ազատվելով Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնից:

Արթուր Հեբոյանը նշանակվել է Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազի պաշտոնին:

Արսեն Եղիազարյանը նշանակվել է Կոտայքի մարզի դատախազության դատախազի պաշտոնին:

Արմեն Սարգսյանը նշանակվել է Գեղարքունիքի կայազորի զինվորական դատախազության դատախազի պաշտոնին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 31-ից հունիսի 3-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 200 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԳԵՏԸ ՄՈՏ ԿԵՍ ՀԱ Է ՔՇԵԼ-ՏԱՐԵԼ

Վրաստանին սահմանակից Դեբեդավան գյուղի վարչական ղեկավար Գեւորգ Սարգսյանից տեղեկացանք, որ մայիսի 26-ի ջրհեղեղը վնասել է գյուղի դաշտերը, այգիները ոռոգող պոմպակայանը: Վարարած Դեբեդը քշել-տարել է մի քանի դեբեդավանցիների պատկանող հողերից 1000-2000 քառակուսի մետր տարածք՝այգիներ, գյուղատնտեսական ցանքեր, անմշակ հողեր: Վարարած գետն ընդհանուր առմամբ Դեբեդավանից քշել-տարել է մոտ կես հեկտար տարածք: Ամեն տարի գրավոր դիմում ենք (2021թ. ապրիլի 8-ից) Տավուշի մարզպետ պաշտոնավարող Հայկ Ղալումյանին, նրան հարցնելով, թե պետական բյուջեից, այլ կազմակերպություններից ինչքամն գումար է նախատեսված Դեբեդի ափն ամրացնող աշխատանքների համար: Մարզպետն էլ միշտ պատասխանել է ,որ նման գումարներ պետական բյուջեից, այլ աղբյուրներից նախատեսված չեն: Գրեթե ամեն տարի վարարած Դեբեդը Դեբեդավանից հողեր է քշում-տանում: Առնվազն վերջին 15 տարում Դեբեդի աջ՝ հայկական ափը պաշտպանող, ամրացնող աշխատանքներ չեն կատարվել, իսկ գետի մյուս՝ ձախ ափը վրացական կողմն ամրացրել է ժայռերով եւ փոքր քարերով: Դեբեդավանի վարչական ղեկավարն ասաց, որ ջրհեղեղը վնասներ է հասցրել գյուղի այգիներին, ցանքատարածություններին. իրենք վնասների մասին հայտնել են Նոյեմբերյանի համայնքապետարան: Սակայն վնասների ամբողջական չափը հայտնի կդառնա, երբ ափամերձ տարածքները լիովին ազատվեն ջրից:

ՄԵԾ ՓՈՍԵՐ՝ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Մայիսի 23-ից Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի Ոսկեպար-Բաղանիս հիմնական սահմանագոտով ձգվող ճանապարհը փակ է, երթեւեկը կատարվում է Ոսկեպար-Բաղանիս շրջանցիկ՝ Հարսնաքարով ձգվող ավտոճանապարհով: Շրջանցիկ, լեռնային տեղանքով ձգվող այդ ճանապարհի ծանրաբեռնվածությունը վերջին օրերին շատ է աճել, քանի որ Ալավերդու տարածաշրջանում տեղի ունեցած ջրհեղեղի հետեւանքով՝ որոշ տեղերում ճանապարհի փլուզման պատճառով Ալավերդիով անցնող ճանապարհը փակ է: Ոսկեպար-Բաղանիս շրջանցիկ՝ Հարսնաքարով ձգվող ավտոճանապարհին արդեն շուրջ 15 մեծ ու փոքր փոսեր են առաջացել, որոնք խոչընդոտում են երթեւեկին: Սահմանազատման անվան տակ այլ տարածքների հետ Կիրանցի կամուրջը եւս ճանաչվել է Ադրբեջանի տարածք. առաջիկայում այդ կամրջով երթեւեկը կարգելվի, իսկ Աճարկուտ գյուղով ձգվող շրջանցիկ ավտոճանապարհը նոր են կառուցում:

ԹԻՎԸ ԱՎԵԼԱՑԵԼ Է 2-ՈՎ

Տավուշի մարզն ունի 5 քաղաք եւ 57 գյուղ: Տավուշի մարզպետարանից ստացված տվյալներով՝ 1998 թվականին Տավուշի մարզում գործել է 52 նախադպրոցական հաստատություն, ուր հաճախել է 2098 երեխա: 26 տարի անց՝2024 թվականին, մարզում գործում է 54 նախադպրոցական հաստատություն, ուր հաճախում է 3203 երեխա:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԳԵՐՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐՈՒՅԹԸ

Սույն թվականի մայիսի 31-ին Երեւանում՝ Ինժեներական քաղաքում, տեղի է ունեցել Հայաստանի ազգային գերհամակարգչային կենտրոնի բացման արարողությունը: Կենտրոնում տեղադրված է տարածաշրջանում առաջին՝ «Ազնավուր» գերհամակարգիչը, որն անվանակոչվել է ի պատիվ ֆրանսահայ նշանավոր շանսոնիե Շառլ Ազնավուրի:

Հայաստանի ազգային գերհամակարգչային կենտրոնի շահագործումն ու սպասարկումն իրականացվելու է ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի եւ ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի կողմից: Այս բացառիկ կենտրոնի ստեղծմանն աջակցել են ՀՀ կառավարությունը, Համաշխարհային բանկը, Եվրոպական միությունը, ՀՀ ԳԱԱ-ն, «Ձեռնարկություններին ինկուբատոր» հիմնադրամը, ԱԹՈՍ (ներկայում՝ Էվիդեն) ընկերությունը:

Հայաստանի ազգային գերհամակարգչային կենտրոնի պաշտոնական բացման արարողությանը մասնակցել են պետական, դիվանագիտական, գիտական եւ մասնավոր ոլորտների ներկայացուցիչներ:

Կենտրոնում տեղադրված «Ազնավուր» գերհամակարգիչը նվիրաբերվել է ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի եւ ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտին Ֆրանսիայի Թուլուզի Համակարգչային գիտությունների գիտահետազոտական ինստիտուտի կողմից:

Շառլ Ազնավուրի որդի, «Ազնավուր» հիմնադրամի համահիմնադիր եւ հոգաբարձուների խորհրդի նախագահ Նիկոլա Ազնավուրը միջոցառման ժամանակ շեշտեց, որ հայրը, ում պատվին անվանակոչված է գերհամակարգիչը, հետաքրքրված էր ժամանակակից տեխնոլոգիաներով ու նորարարություններով: «1980-ականներին հայրս արդեն համակարգիչ ուներ, որն օգտագործում էր տեքստեր գրելիս եւ երգ ձայնագրելիս:

Թերեւս դա էր պատճառը, որ վաղ տարիքից տարված եմ եղել տեխնոլոգիաներով: Հուսով եմ, որ այս սուպերհամակարգիչը կոգեշնչի հետազոտողներին հասնել մեծ առաջընթացի», - ասել է Նիկոլա Ազնավուրը:

ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի եւ ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն Հրաչյա Ասցատրյանը նշել է, որ «Ազնավուր» գերհամակարգչի ձեռք բերումը ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի եւ ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի եւ Ֆրանսիայի Թուլուզի Համակարգչային գիտությունների գիտահետազոտական ինստիտուտի 25 տարվա համագործակցության արդյունք է:

Արեւելյան գործընկերության երկրներից Հայաստանն առաջինն է, իսկ Եվրասիական տնտեսական միության մեջ երկրորդ երկիրն է, որտեղ նման գերհամակարգիչ է տեղադրվել: Այս նորագույն ենթակառուցվածքը լուրջ խթան է Հայաստանում հաշվողական գիտության զարգացման համար, ինչը շղթայական դրական արդյունքը կունենա գիտության մի շարք ուղղությունների շարունակական առաջընթացի համար:

«Ազնավուր» գերհամակարգիչն ունի 1 տերաֆլոպ հզորություն եւ վայրկյանում տեսականորեն կարող է իրականացնել 10 15 գործողություն: Այն բաղկացած է մոտ 24.500 միջուկներից՝ միացված արագագործ կապուղիներով, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել բարձր հաշվողական խնդիրներ:

Գիտնականներն ու հետազոտողները, մասնավոր եւ պետական ոլորտները կարող են հասանելիություն ունենալ մինչեւ 1500 տերաբայթ հիշողության սարքերի:

«Գերհամակարգիչը կարող է օգտագործվել արհեստական բանականության, տվյալագիտության, թվային գիտության, ամպային, մեքենայական ուսուցման, քվանտային ֆիզիկայի, աստրոֆիզիկայի, կենսաինֆորմատիկա եւ բազմաթիվ այլ ոլորտներում: Նման գիտությունները զարգացնելու համար հզոր հաշվողական ռեսուրսներ են պետք: Շնորհակալություն մեր գործընկերներին աջակցության համար, որը հնարավորություն տվեց իրականացնել մեր այս երազանքը», - ասաց Հրաչյա Ասցատրյանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման եւ հասարակայնության հետ կապերի բաժին

ԼՈՒՐԵՐ

ԸՆԹԱՑՔԸ ԵՐԿԱՐ Է ՏԵՎՈՒՄ

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանն անդրադարձել է Կոնդ թաղամասի վերակառուցման ծրագրին:

«Հաշվի առնելով, որ գործընթացը 2021 թվականից է սկսվել, կարծում եմ, որ մի փոքր անտրամաբանական երկար է տեւում այս ընթացքը»,- ասել է նա՝ անդրադառնալով մրցույթին:

Նա նկատել է, որ չի կարող հասկանալ «անվերջանալի մրցույթների տրամաբանությունը».

«Ավելի քան մեկ տարի է 7 սուբյեկտ է ընտրվել, որ պետք է անցնի երկրորդ փուլ, ինչ-որ շատ երկար է տեւում այս երկրորդ փուլը, չասեմ, որ առաջին փուլն էլ էր անտրամաբանական շատ երկար: Միգուցե այդքան աշխատանք կար անելու՝ ամեն մեկի մասով, բայց, համենայնդեպս, մենք չէինք ուզում վերջնական մանրամասն նախագիծ, այլ կոնցեպտուալ առաջարկ՝ որոշակի մակարդակով»:

ՏԵՍԱԽՑԻԿՆԵՐ ԿՏԵՂԱԴՐՎԵՆ

Երեւանի մանկապարտեզներում կտեղադրվեն տեսախցիկներ: Այս մասին հայտարարվեց քաղաքապետարանում տեղի ունեցած աշխատանքային խորհրդակցության ժամանակ:

Նշվեց, որ ուսումնասիրվել են շուրջ 50 մանկապարտեզների տեղանքները, գործող խմբերն ու հատակագծերը:

Ծրագրի ամբողջական իրականացման համար նախատեսվում է մինչեւ 1700 տեսահսկման կետ ունենալ:

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Երեւանի քաղաքապետի. 2023 թվականի նոյեմբերի 29-ի հ.3932-Լ որոշմամբ սահմանվել են Երեւան քաղաքում 4-րդ եւ 5-րդ աստիճանի ռիսկայնության օբյեկտների համար շինարարության ողջ ընթացքում կառուցապատողի կողմից շինարարական հրապարակի տարածքում տեղադրվող օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեխնիկական չափորոշիչները եւ առցանց հարթակի հասանելիության պայմանները:

Համաձայն Երեւան քաղաքի ավագանու՝2012 թվականի մարտի 16-ի հ. 405-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի 5,2-րդ ենթակետի՝ 4-րդ եւ 5-րդ աստիճանի ռիսկայնության օբյեկտների համար շինարարության ողջ ընթացքում կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում պետք է ապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրումը՝առցանց հարթակի հասանելիությամբ:

Այն տնտեսվարողները, ովքեր հետաքրքրված են համագործակցությամբ, կարող են դիմել «Երեւան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ (հեռ. 011-514-707)»:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 47 պատահար. 2 մարդ զոհվել է, 61-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԲԱՆԿՈՄԱՏՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՑԱՆՑ

Տեղեկացնում ենք, որ ս.թ. հունիսի 1-ից Էյչ Էս Բի Սի բանկի Հայաստանի բանկոմատներից կանխիկացում կատարելու դեպքում «Արդշինբանկի» քարտապանների համար գործում են «Արդշինբանկի» բանկոմատներից կանխիկացման պայմանները:

Նմանապես, «Արդշինբանկի» բանկոմատներից կանխիկացում կատարելու դեպքում Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստանի քարտապանների համար գործում են Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստանի բանկոմատներից կանխիկացման պայմանները:

Բանկերը վերահսկվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ԿԵՂԾ ՎԱՐԿԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

55 տարեկանից բարձր անձանց՝ անտոկոս, հրատապ կենսաթոշակային վարկերի տրամադրման գործընթացի մասին տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը: Այս մասին հայտարարություն է տարածել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

«Ի պատասխան շրջանառվող տեղեկատվության՝ առ այն, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը մայիսի 1-ից սկսելու է 55 տարեկանից բարձր անձանց անտոկոս հրատապ կենսաթոշակային վարկերի տրամադրման գործընթաց, հայտնում ենք, որ սույն տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը»,- նշված է հայտարարության մեջ:

Ֆինանսների նախարարությունից հորդորում են հետեւել միայն պաշտոնական լրահոսին:

ՕԳՏՎՈՒՄ ԵՆ ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐ

Հայաստանում մոտ 240 հազար թոշակառու արդեն օգտվում է քեշբեքից: Այս մասին Ազգային ժողովում հունիսի 3-ին ԱԺ մշտական համատեղ նիստում 2023 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության քննարկման ժամանակ հայտարարեց Հայաստանի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը:

Միաժամանակ, իշխանությունները մտադիր են մինչեւ 2024 թվականի վերջը առավելագույնս ավելացնել նրանց մասնակցությունը ծրագրին: «Համեմատության համար՝ 2022 թվականի վերջին՝ ծրագրի առաջին 6 ամիսներին, դրան մասնակցել է շուրջ 66 հազար թոշակառու»,- նշեց Մկրտչյանը:

Նախարարը նաեւ մեջբերեց անկանխիկ գնումների մոնիտորինգի վերջին տվյալները: Այսպիսով՝ պարզվել է, որ կենսաթոշակային քարտերից ամենաշատ գնումները կատարվում են ծխախոտի եւ բենզինի համար: «Սկզբում նրանք չէին ցանկանում ընդլայնել քեշբեքը ծխախոտի եւ ոգելից խմիչքների գնման վրա, բայց հետո հնարավոր չեղավ անհրաժեշտ լուծում մշակել: Հիմա, թերեւս, հնարավոր լինի լուծում գտնել»,- ասաց կառավարության ներկայացուցիչը:

«ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿ-Ի ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ

«ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ...»

«Կոնվերս» բանկի նախաձեռնությամբ եւ բիզնեսի ներկայացուցիչների մասնակցությամբ կայացել է «Բանկային գործիքներ եւ արդի տեխնոլոգիաներ բիզնեսի համար» միջոցառումը:

Դրա շրջանակում ներկայացվել են Converse Markets տեխնոլոգիական հարթակը եւ կորպորատիվ պարտքի ներգրավման այլընտրանքային հնարավորությունները:

Ներկայացնում ենք միջոցառումը՝ հիմնական շեշտադրումներով:

Converse Markets հարթակի մասին Գրիգորի Զաքարյան, «Կոնվերս» բանկի ներդրումային դեպարտամենտի տնօրեն. «Converse Markets-ը ժամանակակից թվային լուծում է, արտարժույթի փոխարկման արդի առօրեական մեթոդ, որը հաճախորդին հնարավորություն է տալիս ստանալ էֆեկտիվ փոխարժեք, համեմատել այն տարբեր բանկերի տրամադրած փոխարժեքների հետ եւ կայացնել արդյունավետ որոշում»:

Հասմիկ Մաթեւոսյան, «Կոնվերս» բանկի ֆինանսական շուկաների վարչության պետ. «Հարթակում, բացի փոխարկումը, հնարավոր է նաեւ կատարել փոխարժեքի գնանշման հարցում, ներկայացնել փոխարկման պատվեր, տեղեկատվություն ստանալ արժութային շուկայում spot գների վերաբերյալ: Այս պահին հասանելի է փոխարկման հնարավորություն ավելի քան 35 արժութային զույգերով: Այս պահին հարթակը հասանելի է բանկի՝ իրավաբանական անձ հաճախորդներին: Հարթակի հնարավորություններն ու բիզնեսին հասանելիությունը աստիճանաբար կընդլայնվեն»:

Ֆինանսների ներգրավման ուղիների դիվերսիֆիկացիայի մասին Գրիգորի Զաքարյան՝ «Կոնվերս» բանկի ներդրումային դեպարտամենտի տնօրեն. «Շատ կարեւոր է, որ տնտեսվարող սուբյեկտներն ունենան հասանելիություն կապիտալի շուկաներին: Որպես առաջին քայլ՝ բանկն առաջարկում է սկսել պարտատոմսերի թողարկմամբ, ինչի ողջ գործընթացը բանկը պատրաստ է կազմակերպել յուրաքանչյուր պոտենցիալ թողարկողի համար»:

Էլեն Քարիմյան, «Կոնվերս» բանկի կորպորատիվ ներդրումային բանկային ծառայությունների բաժնի պետ. «Ֆինանսների ներգրավման այս եղանակից օգտվելու հիմնական առավելություններն են ֆինանսական ծախսային հոսքերի կրճատումը, մեծաքանակ ներդրողներից միջոցների ներգրավումը որպես մեկ վարկատուից ֆինանսական անկախության կարեւոր գործոն, պարտատոմսերի շրջանառման ողջ ընթացքում մասնակի մարումների բացակայությունը եւ շատ այլ առավելություններ: Միաժամանակ, Հայաստանի ֆոնդային բորսայում պարտատոմսերի ցուցակման դեպքում թողարկողները կօգտվեն պետական աջակցությունից»:

Արդյունքների մասին

Միջոցառման ձեւաչափը հնարավորություն էր տալիս ոչ միայն ծանոթանալ «Կոնվերս» բանկի առաջարկներին, այլ նաեւ քննարկել, ստանալ հուզող հարցերի պատասխանները: Ընթացքում նաեւ համագործակցության պայմանավորվածություններ ձեռքբերվեցին:

«Կոնվերս» բանկը պատրաստ է իր փորձառությունը ներդնել բիզեսի կայացման համար՝ դառնալով վստահելի ուղեկիցը կապիտալի շուկայում:

«Կոնվերս» բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

ԸՆԹԱՑԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՄԻԱՆԱ ԵՆԱԲ–ԻՆ

Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը հավանություն տվեց Հայաստանի՝ Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկին միանալու նախագիծը վավերացնելուն:

«Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին նախագիծն ԱԺ նիստում ներկայացրեց ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նարեկ Հովակիմյանը:

Նախարարի տեղակալը նշեց, որ դեռ 2017 թվականից քննարկվել է ՀՀ կառավարության կողմից Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկին միանալու հարցը:

2019թ. ՀՀ ֆինանսների նախարարությունն առաջարկել է, որ Հայաստանը 5 բաժնեմասով բաժանորդագրվի բանկին, սակայն առաջարկը սկզբունքորեն մերժվել է բանկի կողմից՝նշվելով, որ 5 բաժնեմասով բաժանորդագրված են բացառությամբ ամենափոքր թեկնածուները:

«Միանալու ենք 374 բաժնեմասի բաժանորդագրությամբ, գումարը վճարվելու է 5 մասով՝ ամեն տարի ընդհանուր գումարի 20 տոկոսի չափով: Կարծում ենք, որ ռիսկերի եւ վարկային միջոցների դիվերսիֆիկացիայի տեսանկյունից նախագիծն արդարացված է», - ասաց Նարեկ Հովակիմյանը:

Թե ինչ կտա Հայաստանին բանկին միանալը՝ Հովակիմյանն ասաց, որ ներդրումային բանկի անդամ դառնալով՝ ներդրումների տեսանկյունից լայն սպեկտոր է բացվում:

«Այս պահին հիմնական նպատակներից մեկն այն է, որ հնարավորություն ենք ունենում դառնալու «Մեկ գոտի մեկ ճանապարհ» չինական նախաձեռնության մեծ ներդրումային ծրագրի անդամ եւ ենթակառուցվածքների առումով ներգրավել մի շարք ներդրումներ եւ ցածր տոկոսադրույքով վարկային միջոցներ», - ասաց նա:

Ըստ նախագծի հիմնավորման՝ բանկին անդամակցելը կարեւորվում է հայ-չինական քաղաքական երկխոսությանը նոր խթան հաղորդելու տեսանկյունից: Միաժամանակ այն կարող է ստեղծել հնարավորություններ՝ Հայաստանի տրանսպորտային ենթակառուցվածքների արդիականացման նպատակով՝ Չինաստանի ֆինանսավորմամբ ներդրումների ներգրավման համար:

Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկը (ԵՆԱԲ) հիմնվել է 2015 թվականին Չինաստանում: Այն բազմակողմ զարգացման բանկ է, որի նպատակն է նպաստել կայուն տնտեսական զարգացմանը, ստեղծել բարեկեցություն եւ բարելավել ենթակառուցվածքները՝ ներդրումներ կատարելով ենթակառուցվածքներում եւ այլ արդյունավետ ոլորտներում, խթանել տարածաշրջանային զարգացումը Ասիայի եւ Օվկիանիայի տարածաշրջանում՝ այլ միջազգային բազմակողմ եւ երկկողմ զարգացման կառույցների հետ սերտ համագործակցությամբ:

Համաձայնագիրը վավերացնելու մասին նախագիծը հանձնաժողովում ստացավ դրական եզրակացություն, կքննարկվի ԱԺ առաջիկա հերթական նիստում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Սյուզաննա Կարենի Սաֆարյանս, սույն թվականի ապրիլ ամսին Արարատի մարզի Արտաշատ քաղաքի տարածքում կորցրել եմ դիպլոմս: Գտնողին խնդրում եմ կապ հաստատել ինձ հետ:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՊՐԵՄԻԵՐԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՏԵԿՏԻՎ՝ «ՎԱՐՇԱՎԱ 21»

Հունիսի 10-ին ռուսական Okko օնլայն-կինոթատրոնում տեղի կունենա Վիկտոր Սողոմոնյանի «Վարշավա 21» քաղաքական դետեկտիվի պրեմիերան, որը պատմում է ռուս դիվանագետների աշխատանքի մասին Լեհաստանում:



«Վարշավա 21» սերիալի բեմադրող ռեժիսորն է Ֆելիքս Գերչիկովը, բեմադրող օպերատորը՝ Անտոն Կոստրոմինը, բեմադրող նկարիչը՝ Վասիլի Գրոզնին: Գլխավոր դերերը կատարել են Դմիտրի Միլլերը, Դմիտրի Կուլիչկովը, Վալերիա Շկիրանդոն, Կոնստանտին Կրյուկովը, Սերգեյ Յուշկեւիչը, Անդրեյ Իլյինը, Յուրի Բատուրինը, Նիկոլայ Կոզակը, Անատոլի Կոտենյովը, Յուրի Բելյաեւը, Սերգեյ Գուրեւը եւ այլք:

Ֆիլմի գլխավոր պրոդյուսերներն են ամենահայտնի ռուսական քաղաքական դետեկտիվներից մեկի՝ «Դեսպանատուն» սերիալի (НТВ, 2018) ստեղծողները՝ Վիկտոր Սողոմոնյանը եւ Միխայիլ Վոլոբուեւը: Սա նրանց երրորդ համատեղ աշխատանքն է:

«Վարշավա 21» սերիալը նույնպես ստեղծվել է ռուսական կինեմատոգրաֆի համար հազվադեպ՝ քաղաքական դետեկտիվի ժանրով: Չնայած սյուժեի հիմքում ընկած իրադարձությունները հորինված են՝ պատմությունը բավականին հավաստի կերպով փոխանցում է այն տրամադրությունները, որոնք նկատվում են աշխարհի քաղաքական քարտեզին վերջին մի քանի տարիներին:

Նախընտրական արշավի ընթացքում Լեհաստանի նախագահի աթոռի համար սպանում են հանրահայտ լրագրող Կոզելսկուն: Լեհական հեռուստաալիքները ակնթարթորեն որսում են երկրի ներքին գործերին Ռուսաստանի միջամտության մասին վարկածը՝ սիլեզյան անջատողականներին աջակցելու եւ իրադրության ապակայունացման նպատակով: Որպես ապացույց հեռուստատեսությամբ պատում են ռուս դեսպան Կոնոբեեւի (Անատոլի Կոտենյով) եւ նախագահի թեկնածուներից մեկի՝ Դոմբրովսկու (Սերգեյ Յուշկեւիչ) խոսակցության ձայնագրությունը, որը, իբր, ուղարկվել է սպանված լրագրողի փոտով: Փոքր կայծից աշխարհաքաղաքական հրդեհ է բռնկվում, որը կարող է հսկայական վնաս պատճառել երկրի շահերին: Դիվանագիտական առաքելության վարկաբեկված աշխատակիցը հիվանդանոց է ընկնում ինֆարկտով, իսկ նրա փոխարեն գալիս է ճգնաժամային դիվանագետ Վյաչեսլավ Վասիլեւը (Դմիտրի Միլլեր): Նա պետք է ապացուցի, որ մեղադրանքները Մոսկվայի հասցեին որեւէ հիմք չունեն:

«Քաղաքական երանգավորում ունեցող դետեկտիվի ժանրում աշխատելը անասելի գրավիչ եւ, միեւնույն ժամանակ, անհավանական բարդ գործ է: Ստեղծագործությունն ստացվում է բազմակողմ ու հագեցած, եւ այդ ամենը շնորհիվ այն բանի, որ պետք է հաշվի առնել բազմաթիվ գործոններ, պահպանել գեղարվեստական հորինվածքի եւ իրականության միջեւ հավասարակշռությունը: Այո, սերիալի իրադարձությունները կարող են հորինված լինել, բայց պատումի մթնոլորտը պետք է համոզի դիտողին, որ էկրանին տեղի ունեցողը եթե վավերագրական էլ չէ, ապա խիստ հրատապ է ու մոտ կյանքին: Իսկ եթե դրա հետ նաեւ ստացվում է պահել լարված դետեկտիվ բաղադրիչը, ապա ծնվում է նախագիծ, որը գրավում եւ լարված է պահում հանդիսատեսին: Ինձ թվում է, որ այս սերիալում մեզ հաջողվել է լուծել այս բազմախնդրայնությունը եւ բոլոր բաղադրիչները հանրագումարել մեկ միասնական պատկերում: Բայց վերջնական խոսքը, իհարկե, հանդիսատեսինն է»,- նշել է բեմադրող ռեժիսոր Ֆելիքս Գերչիկովը:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԲԱՑՄԱՆ ԳԱԼԱ ՀԱՄԵՐԳ

Հունիսի 6-ին կմեկնարկի Խաչատրյանի անվան 20-րդ միջազգային մրցույթը: Այս տարի այն կանցկացվի ջութակ մասնագիտական կարգում: Բացման արարողությունը եւ համերգը, ավանդույթի համաձայն, տեղի կունենան մեծ կոմպոզիտորի ծննդյան օրը:

Գալա համերգի ծրագրում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ կհնչեն Խաչատրյանի ստեղծագործությունները՝ «Ծնունդդ շնորհավոր», վարիացիաներ Արամ Խաչատրյանի թեմաներով, գործիքավորումը՝ Մարտին Ուլիխանյանի, Սպարտակի եւ Ֆրիգիայի ադաջո «Սպարտակ» բալետից, Արամ Խաչատրյանի Ջութակի կոնցերտը, որը կներկայացնի Խաչատրյանի անվան 16-րդ միջազգային մրցույթի հաղթող, ջութակահար Դիանա Ադամյանը: Համերգի ընթացքում կհնչի նաեւ Ջոն ցնծության ստեղծագործությունը մեցցո-սոպրանոյի, խառը երգչախմբի, ջութակահարների անսամբլի, տավղահարների անսամբլի եւ նվագախմբի համար, մենակատար՝ Բելլա Ամարյան (մեցցո-սոպրանո): Համերգին ելույթ կունենա նաեւ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը: Երեկոն կղեկավարի դիրիժոր Սերգեյ Սմբատյանը: «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամի կողմից կազմակերպվող երաժշտական այս ստուգատեսն իր կարեւոր տեղն ունի աշխարհում անցկացվող միջազգային մրցույթների ընտանիքում: Խաչատրյանի անվան միջազգային մրցույթը 2013 թվականից Ժնեւում հիմնված Միջազգային երաժշտական մրցույթների համաշխարհային ֆեդերացիայի (WFIMC) անդամ է եւ գործում է ֆեդերացիայի սահմանած կանոններով: Խաչատրյանի անվան մրցույթի գլխավոր աջակիցն է Երեւանի քաղաքապետարանը: Մրցույթը կազմակերպվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՓՈՒԼ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հայտարարում է Հայաստանի Հանրապետության 2025 թվականի երիտասարդական մայրաքաղաքի ընտրության մրցույթ:

Ամենամյա մրցույթի նպատակն է աջակցել մարզային երիտասարդական կյանքի ակտիվացմանը, երիտասարդների կարողությունների բացահայտմանը եւ համակողմանի զարգացմանը, խթանել ՏԻՄ-երի կողմից երիտասարդական քաղաքականության ոլորտում իրականացվող աշխատանքները եւ ծրագրերի ծավալների մեծացման գործընթացը եւ այլն:

Մայրաքաղաք Երեւանը չի մասնակցում մրցույթին: Նույն քաղաքը չի կարող երկու անգամ անընդմեջ ճանաչվել ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք:

Յուրաքանչյուր տարի մրցույթի կազմակերպման եւ անցկացման աշխատանքների իրականացման համար ստեղծվում են մրցութային հանձնաժողով եւ փորձագիտական գնահատման խումբ:

Մրցույթի արդյունքներն ամփոփվում եւ հաստատվում են մրցութային հանձնաժողովի կողմից՝ փորձագիտական գնահատման երկու բաղադրիչների եւ SMS քվեարկության համադրությամբ:

Մրցույթին կարող են դիմել քաղաքային բնակավայր ունեցող համայնքը կամ նրա կազմում ներառված առանձին քաղաքային բնակավայրը:

Մրցույթի արդյունքներով երիտասարդական մայրաքաղաք հռչակված քաղաքը դիտարկվում է որպես երիտասարդական, մշակութային, սպորտային միջոցառումների եւ նախաձեռնությունների իրականացման առաջնահերթ վայր:

Մրցույթի մասնակցության հայտերն ընդունվում են հունիսի 3-ից մինչեւ օգոստոսի 2-ը ներառյալ:

Հայտերի՝ մրցույթի իրականացման կանոնակարգի պահանջներին համապատասխան ներկայացման եւ պատշաճ լրացմանն աջակցության նպատակով հունիսի 24-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ ԿԳՄՍՆ-ում տեղի կունենա խորհրդատվական հանդիպում՝ նախատեսված այն քաղաքների/համայնքների ներկայացուցիչների համար, որոնք պատրաստվում են հայտ ներկայացնել:

Մասնակցության համար անհրաժեշտ է մինչեւ հունիսի 19-ը youth@escs.am էլ. փոստին ուղարկել մասնակցի(ների) մասին տեղեկատվություն՝ նշելով անունը, ազգանունը, ստորաբաժանումը, պաշտոնը, բջջային հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՈՒՂԵԳԻՐ Է ՆՎԱՃԵԼ

Բռնցքամարտիկ Դավիթ Չալոյանը Փարիզի 2024 թվականի Օլիմպիական խաղերի ուղեգիր է նվաճել:

Աշխարհի փոխչեմպիոն, +92 կգ քաշային Դավիթ Չալոյանը Բանգկոկում ավարտվող օլիմպիական վարկանիշային մրցաշարի քառորդ եզրափակչում 3:2 հաշվով առավելության է հասել իռլանդացի Մարտին Մաքդոնագի նկատմամբ՝ ապահովելով իր մասնակցությունն ամառային 33-րդ Օլիմպիական խաղերում: Սա Հայաստանի արդեն 12-րդ ուղեգիրն էր:

ՀԱՎԱՔԱԿԱՆԸ՝ ՍԼՈՎԵՆԻԱՅՈՒՄ

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը մեկնեց Լյուբլյանա, որտեղ հունիսի 4-ին ընկերական հանդիպում կանցկացնի Սլովենիայի թիմի հետ. հաղորդում է ՀՖՖ-ի կայքը:

Հայաստանի ազգային հավաքականը Սլովենիա է մեկնել հետեւյալ կազմով.

Դարպասապահներ
Օգնյեն Չանչարեւիչ - «Նոա»
Արսեն Բեգլարյան - «Արարատ-Արմենիա»
Ստանիսլավ Բուչնեւ - «Փյունիկ»
Պաշտպաններ
Վարազդատ Հարոյան - «Ցինդաո Ուեստ Քոսթ» (Չինաստան)
Նաիր Թիկնիզյան - «Լոկոմոտիվ» (Մոսկվա, Ռուսաստան)
Ստյոպա Մկրտչյան - «Օսիեկ» (Խորվաթիա)
Կամո Հովհաննիսյան - «Արարատ-Արմենիա»
Գեորգի Հարությունյան - «Կրասնոդար» (Ռուսաստան)
Անդրանիկ Հակոբյան - «Վալենսիա Մ-19» (Իսպանիա)
Դավիդ Դավիդյան - «Փյունիկ»
Էրիկ Սիմոնյան - «Ուրարտու»
Սերգեյ Մուրադյան - «Նոա»
Էդգար Գրիգորյան - «Արարատ-Արմենիա»
Կիսապաշտպաններ/Հարձակվողներ
Էդուարդ Սպերցյան - «Կրասնոդար» (Ռուսաստան)
Տիգրան Ավանեսյան - «Բալթիկա» (Ռուսաստան)
Էդգար Սեւիկյան - «Ֆերենցվարոշ» (Հունգարիա)
Վահան Բիչախչյան - «Պոգոն» (Լեհաստան)
Արտակ Դաշյան - «Նոա»
Հովհաննես Հարությունյան - «Փյունիկ»
Սոլոմոն Ուդո - «Փյունիկ»
Գեւորգ Տարախչյան - «Ուրարտու»
Ժիրայր Շաղոյան - «Արարատ-Արմենիա»
Արթուր Սերոբյան - «Արարատ-Արմենիա»
Գոռ Մանվելյան - «Նոա»
Արթուր Միրանյան - «Նոա»

ՖԻԴԵ–Ի ԱՂՅՈՒՍԱԿԸ

Շախմատի միջազգային ֆեդերացիան հրապարակել է շախմատիստների դասակարգման թարմացված աղյուսակը: 100 ուժեղագույն շախմատիստների թվում կա Հայաստանի երեք ներկայացուցիչ: Հայկ Մարտիրոսյանը 2662 վարկանիշով զբաղեցնում է 67-րդ տեղը, Գաբրիել Սարգսյանը (2660) 70-րդն է, Հրանտ Մելքումյանը (2646)՝ 93-րդը:

● *Հունիսի 11-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի Պետական Կամերային Թատրոնում տեղի կունենա «5+1 պատմություն սիրո մասին» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3000-8000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե որ ուսանողներին է կրթաթոշակ տրվում:

Արամ Սարգսյան (22 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է, որը մրցութային կարգով տրվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատության ուսանողին՝ գերազանց եւ լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսեւորելու համար, ինչպես նաեւ սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերի ուսանողներին: Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներ են համարվում՝

1) մասնակցությունը ուսումնական հաստատության ուսանողական, հասարակական աշխատանքներին,

2) զեկուցումները, ռեֆերատները, հրատարակած աշխատանքները (գիտական ամսագրերում եւ զանգվածային լրատվության միջոցներում),

3) մասնակցությունը միջքոլեջային, քաղաքային, հանրապետական եւ միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին,

4) այլ ստեղծագործական նախաձեռնություններ՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատության հայեցողությամբ: Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունում պետական կրթաթոշակը տրվում է ուսանողական նպաստի համակարգում ընդունված ուսանողին:

Պետության կողմից կրթաթոշակ տրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից չֆինանսավորվող ուսումնական հաստատություններում կրթաթոշակի հատկացման մասին որոշումն ընդունում է հիմնադիրը:

ՀՀ կրթության, գիտության, սպորտի եւ մշակույթի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված եւ ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող 1-ին կուրսի ուսանողներին, ըստ սահմանված չափերի, համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում տրամադրվում է պետության կողմից ուսանողական նպաստի ձեւով ուսման վճարի մասնակի փոխհատուցում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ով է անձին սահմանում հաշմանդամություն:

Տաթեւ Արիստակեսյան (60 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տ. Արիստակեսյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ անձին հաշմանդամություն սահմանելու նպատակով բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնում են բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինները՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գրասենյակի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը եւ տարածքային բժշկասոցիալական փորձաքննական բաժինները:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաշվառում չունեցող անձինք կարող են ենթարկվել բժշկասոցիալական փորձաքննության՝ ներկայացնելով տեղեկանք փաստացի բնակության վայրից: Օտարերկրյա պետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում կարող են անցնել բժշկասոցիալական փորձաքննություն, եթե տվյալ պետության հետ Հայաստանի Հանրապետությունն ունի համապատասխան միջպետական պայմանագիր:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հեծանվի միջազգային օրվա կապակցությամբ Երեւանում անցկացվել է հեծանվաշքերթ եւ հեծանվասպորտի սիրողական մրցաշար:

Մրցաշարին մասնակցել է մոտ 300 հեծանվորդ: Հեծանվաշքերթի ավարտին մասնակիցներին տրվել են մարզաշապիկներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 8 + 12 +22 + 26
Կոտայքի լեռներ	+ 8 + 12 +23 + 26
Կոտայքի նախալեռներ	+ 15+ 17 +28 + 30
Գեղարքունիք	+ 10+ 13 +21 + 24
Լոռի	+ 9 + 13 +24 + 27
Տավուշ	+ 15+ 17 +28 + 31
Արագածոտնի լեռներ	+ 9 + 13 +21 + 24
Արագածոտնի նախալեռներ	+ 15+ 18 +28 + 31

Արարատ	+ 16 + 18 +31 + 33
Արմավիր	+ 16+ 18 +31 + 33
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 11 +22 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+ 16 + 18 +31 + 33
Սյունիքի հովիտներ	+ 18 + 22 +29 + 32
Սյունիքի նախալեռներ	+ 13 + 15 +25 + 28
ԼՂՀ	+ 13 + 14 +25 + 26
Երեւան	+ 23 + 25 +29 + 31

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **3.6.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*